Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հուլիսի 27-ի N 1287 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչներին (այսուհետ՝ հյուրընկալվող) ժամանակավորապես հյուրընկալող կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ հյուրընկալ) սոցիալական աջակցության տրամադրմանը (նշանակելուն և վճարելուն) առնչվող հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով հյուրընկալվող են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի այն բնակիչները, ովքեր 2022 թվականի դեկտեմբերին նախորդող 6 ամիսներին փաստացի բնակվել են Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը ներառյալ (բացառությամբ այն դեպքերի, երբ Լեռնային Ղարաբաղի բնակիչը Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի միջնորդությամբ) և Հայաստանի Հանրապետությունում չունեն բնակելի անշարժ գույք:

3. Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ 2023 թվականի

հունիս-օգոստոս ամիսների համար՝ հյուրընկալի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

4. 2023 թվականի հունիս - օգոստոս ամիսների համար ներկայացվում են առանձին դիմումներ: Ընդ որում, դիմումը պետք է ներկայացվի՝

1) 2023 թվականի հունիս ամսվա համար՝ օգոստոսի 20-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ.

2) 2023 թվականի հուլիս ամսվա համար՝ սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ.

3) 2023 թվականի օգոստոս ամսվա համար սեպտեմբերի 11-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ:

5. Դիմումը ներկայացնելու համար հյուրընկալը սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետներում online.socservice.am կայքէջից մուտք է գործում համապատասխան ծրագրային միջավայր և ծառայություն է ներկայացնում՝

1) իր անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի կամ նույնականացման քարտի) սերիան ու համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և իր (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ) բանկային հաշվեհամարը.

2) հյուրընկալվողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ անչափահասի դեպքում՝ ծննդյան վկայականի) սերիան ու համարը և էլեկտրոնային լուսապատճենը, բնակվելու օրերի քանակը և յուրաքանչյուր օրվա գումարը:

6. Ծառայությունը հավաքագրում է առցանց ռեժիմում դիմումով ներկայացված տվյալները և 5 օրվա ընթացքում տրամադրում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը և Լեռնային Ղարաբաղի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

7. Ծառայությունն առցանց ռեժիմում դիմումով ներկայացված տվյալները համեմատում է (համադրում է) բնակչության պետական ռեգիստրի, անշարժ գույքի պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրանցման վերաբերյալ տվյալների և Հայաստանի

Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Սյունիքի մարզպետի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի, Լեռնային Ղարաբաղի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից տրամադրած տվյալների հետ և հաշվառում է կամ մերժում դիմումը:

8. Ծառայությունը դիմումը հաստատելու, հաշվառելու կամ մերժելու մասին անմիջապես էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում դիմողի (հյուրընկալի) հետ հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեին: Էլեկտրոնային հաղորդագրությունը պարունակում է սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված տվյալները, դիմումը ներկայացնելու ամսաթիվը, դիմումը (նաև կոնկրետ հյուրընկալվողի մասով) մերժելու դեպքում՝ մերժելու պատճառը, իսկ դիմումը հաստատելու դեպքում՝ հաշվարկված դրամական օգնության չափը:

9. Եթե դիմումը չի մերժվում, ապա ծառայությունը՝

1) հաշվառում է դիմումը և ինքնաշխատ եղանակով հաշվարկում է դրամական օգնության չափը, որը յուրաքանչյուր հյուրընկալվողի համար չի կարող գերազանցել օրական 13 000 դրամը.

2) հաստատում է դիմումը և հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում հաշվարկված դրամական օգնության վճարման գործընթացը:

10. Դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տվյալները թերի են (չեն ներկայացվել պահանջվող բոլոր տվյալները կամ փաստաթղթերը).

2) ներկայացված տվյալները հավաստի չեն (ներկայացված տվյալները չեն համապատասխանում բնակչության պետական ռեգիստրի տվյալներին կամ հյուրընկալը կամ հյուրընկալվողը ներառված չեն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի կամ Երևանի քաղաքապետարանի տրամադրած ցուցակներում և ցանկերում).

3) Լեռնային Ղարաբաղի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստացվել է հյուրընկալվողի՝ 2022 թվականի դեկտեմբերին նախորդող 6 ամիսներին Լեռնային Ղարաբաղում փաստացի չբնակվելու կամ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու կամ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից

հետո (բացառությամբ այն դեպքերի, երբ Լեռնային Ղարաբաղի բնակիչը Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի միջնորդությամբ) Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու վերաբերյալ տեղեկություն.

4) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից ստացվել է հյուրընկալվողի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու վերաբերյալ տեղեկություն.

5) դիմումը ներկայացնելու պահին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների համաձայն առկա է հյուրընկալ անհատ ձեռնարկատիրոջ կամ հյուրընկալվողի մահվան պետական գրանցում.

6) դիմումը ներկայացնելու պահին հյուրընկալվողն ունի Հայաստանի Հանրապետությունում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով իրեն պատկանող բնակելի անշարժ գույք.

7) հյուրընկալվողը ծառայությանը ներկայացնում է աջակցության տրամադրման դադարեցման առցանց դիմում՝ փաստացի հյուրընկալված չլինելու հիմքով.

8) դիմումում լրացված բանկային հաշվեհամարը սխալ է: Նշված դեպքում, բանկային հաշվեհամարը ճշտելու նպատակով, հյուրընկալը online.socservice.am կայքէջի միջոցով կատարում է համապատասխան փոփոխություն իր ներկայացրած դիմումում՝ ծառայության կողմից համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում.

9) հյուրընկալվողի անվամբ տվյալ ամսվա համար առկա է հաստատված դիմում:

11. Մեկ հյուրընկալվողի գծով սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամսական մեկ անգամ:

12. Աջակցության գումարը վճարվում է դրամական օգնության գումարը հյուրընկալի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

13. Դրամական օգնությունը փոխանցելու օրվան հաջորդող օրը ծառայությունն այդ մասին հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնում է դիմողին:

14. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

Ձև N 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ՈՒՄ ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՎ ԾՐԱԳՐԻ ՀՅՈՒԸՆԿԱԼՎՈՂ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անվանում	ՀՎՀՀ	Հասցե	Հյուրընկալ-վողների թիվը	Անուն, ազգանուն, հայրանուն	ՀԾՀ կամ այն չունենալու մասին տեղեկանքի համար	Անձնագրի կամ ծննդյան վկայականի համար	Հյուրանոցում գտնվելու ամսաթիվը	Հեռախոսա-համար (առկայության դեպքում)	Յուրաքանչյուր օրվա գումարը (հազ. դրամ)
1.					1					
					2					
					3					
					…					
2.					1					
					2					
					3					
					…					
3.					1					
					2					
					3					
					…					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ